



ՅԱՄՈՐ ՈՒՏՈՂ ԷՐԵԽԵՆ

Ըլնում ա շիլնում մի կնիկ, եղ կնիկը ոմնենում ա մի տղա, մի աղջիկ. տղեն ըսենց տասը-տասնըհինգ տարեկան, աղջիկն էլ հյա ծծի էրեխա ա ըլնում:

Օրեն մի օրը էդ կնիկը հաց թխելիս ա ըլնում: Բերում ա էդ ծծի էրեխին օրորոցումը քուն դնում, եննա իրա բանին կենում: Տղեն էլ զե՛ եքա տղա, մորը օգտում էր՝ գունտ էր կրում, ցախ էր բերում թունդիրը վառում, մախլասի՛ մոր աղաքին բան էր անում: Էս տղեն ա՛ մըն էլ որ էթում ա գունտ բերելու, տենում ա ի՛նչ՝ իրանց ծծի էրեխեն հրեն ուսուկով օրորոցիցը վեր էկավ, զնաց խմորի գնտերից մինը կերավ, էլ եղ գնաց մտավ օրորոցը: Էս որ տենում ա, մնում ա զարմացած, թե էրեխեն էլ խմոր կուտի:

Գալիս ա մորը նազլ անում.— Ա՛զի, — ասում ա, — բա չես ասի՛ ըսե՞նց, ըսե՞նց բան, մեր էրեխեն օրորոցիցը վեր էկավ, խմորի գնտերից մինը կերավ, էլ եղ գնաց մտավ օրորոցը:

— Զէ՛, — ասում ա մերը, — դու էլ ընե՞նց սուտ ես ասում, որ ոէշն ախոռումը կզռա։ ծծի էրեխեն էլ գո՛ւնտ կուտի:

— Զես ավատում, — ասում ա տղեն, — բո՛ւսուն քաշս, տե՛ս զրուատ եմ ասում, թե չէ:

Սա՛ հա՛, նա՛ չէ՛, սա՛ հա՛, նա՛ չէ՛, մախլաս՝ ի՛նչ անում ա, մի անում՝ մորը չի կարում ավատացնի: Տղեն էլի էթում ա գունտ

թերելու, էլի տենում ա էն էրեխեն օրորոցիցը վեր էկավ, զնոց խմորի գնտերից մինը կերավ, էլ եղ գնաց մտավ օրորոցը, էլի դալիս ա մորն ասում, էլի մերը չի ավատում, հյա տղի վրեն բարկանում էլ ա: Մի՛ն, է՛րկու, հի՛նգ, տա՛սը, քանի տենում ա՝ դարիս ա մորն ասում ա, համա մերը տղին անկաշ չի անում:

Էդ տղեն ա՝ տենում ա, որ մերը իրա ասածը բանի տեղ չի գնում, ինքն իրան միտք ա անում. ռԱ՛ղպեր,— ասում ա,— էս ծայ էրեխեն հմիկուց որ խմոր ա ուտում, մենծանա, ով գիտա, մըզ էլ ուտի. պտի աղաքուց ես իմ զլիսի ճարը տենամ»:

Էթում ա մի քանի հաց վեր ունում ու յա՛լլա՝ դռնե դուս. զլովսը առնում, անսաս էթում: էթում ա, էթում ա, էթում ա, շառն ու քիչն աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մախլասի՛ մի շարաթ. գշեր, ցերեկ զալիս ա՝ մի սարի ա ուստ գալի: Վարուվուրդ ա անում, տենում՝ էդ սարի դոշին հրենիկ մի սուրու ոշխար. զե՛ս ա մտիկ տալի, զե՛ն ա մտիկ տալի, տենում ա ո՛նչ շորան կա, ո՛նչ զադ Մնում ա միտք անելոն, թե էս ի՛նչ բաս ա, էս սուրու ոշխարը խի՛ ա անտեր-անտիրական ըստե արածում:

«Կա, չկա,— ասում ա,— ըստե մի բան կա. պտի ընշանը իրիկուն ըստե կենամ, տենամ էս ոշխարը ո՞ւր ա էթում, ես էլ հեննեն էթամ»:

Մնում ա ընշանը իրիկուն. մութը գետինը կոխում ա թե չէ, տենում ա հրես սարը ճղվեց, բաց էլավ ու եղ սուրու ոշխարը ինքն իրան գնաց, մտավ մեջը: Տղեն էս որ տենում ա, ինքն էլ ուսուզով ոշխարի հեննա մննում ա նեքսե: Ոշխարը որ քոմմա մննում ա, սարը էլ եղ խփվում ա, կալնվում:

Էս տղեն մննում ա սարի մեջը, ի՛նչ տենում՝ լա՛վ-լա՛վ տներ, լա՛վ-լա՛վ օթախներ, լա՛վ-լա՛վ ամարաթներ, տո՛ւն, տե՛ղ, զո՛մ, մա՛րագ, մախլաս՝ ի՛նչ ասես կա. մի մարդ, մի կնիկ էլ էդ օթախների միշին, որ էրկսի աշքերն էլ հանած ա, ո՛ր ասես, զադ շեն տենում: էդ կնիկը դուս ա գալի ոշխարի աղաքը, քշում, տանում անում գոմը, եննա մաթրաթը վեր ա ունում, էթում ոշխարը կթում, մաթրաթը պըռտեպունգ լքցնում, բերում: Մարդ ու կնիկ էդ մաթրաթ կաթը լավ-լազաթին փրթում են, գթալներն առնում, ընկնում նրա ջանին: Տղեն էս որ տենում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում. զաթի ինքն էլ սոված, նըխտից ընկել էր, մի դհիցն էլ նա ա վրա պրծնում կաթին: Մարդ ու կնիկ սաղ մաթրաթը դարտը-

կում են, չեն կշտանում: Կնիկն էթում ա թազադան կթում, բերում: Ըս էլ են ուսում, էլի չեն կշտանում: Մնում են արմացած. աղաք մի մաթրաթ ին ուսում, կշտանում ին, հմի էրկու մաթրաթ կերան, էլի սոված մնացին: Ալբիալը սայմիշ են ըլնում:

— Կա, չկա,— ասում են,— ըստե իսանառղի կա, որ մեր փայիցն ուսում ա, չենք տենում: Ի՞նս ես, չի՞նս ես, ջանավար ես,— ասում են,— ձե՛ն հանա:

Տղեն էս որ լսում ա, նոր արշա ա ընկնում, ընդիան ձեն տալի: — Հողա՛ծին եմ,— ասում ա,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց էկել եմ, ընկե ըստե, ա՛սու սիրուն,— ասում ա,— մի տեղ տվեք սթար անեմ, կշտներիդ մնամ, ես ըլնեմ ձեղ ո՛րդի, դուք ինձ՝ հերնըմեր:

Նստում ա մին-մին, տեղը-տեղին նազլ անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նազլ արի:

— Լա՛վ,— ասում են էդ քոռերը,— զա՛րու ենք: Դե որ ըտենց ա, էս ոշարը քեզ ենք պահ տալի. առավոտները սարը կրացվի՝ կտանես հանդը, կարածացնես, իրիկները էլ եդ կրշես, կրերես: Մեղանից քեզ ամանաթ,— ասում են,— էս սարի վրեն ո՛ւր ուզում ես զնա, ի՞նչ ուզում ես արա՝ ձեն, ծպտոն հանող չինի, համա ֆլա՛ն սարը չէ՛թաս, ընդե սատանեք կան, զլուխդ փորձանք կզա. Հրես տենում ես՝ մեր աշքերն էլ էն սատանեքն են հանես, էդ հո էդ. Ֆլա՛ն տեղումը, ֆլա՛ն սարումն էլ մի Ասլան կա, ընդե էլ չէ՛թաս, թե չէ Ասլանը քեզ կրոքրի, մենծ թիքեն անկաշդ կթողա:

— Ա՛շքիս վրեն,— ասում ա տղեն,— որ ասում եք՝ չեմ էթա: Էս տղեն մնում ա դրանց կշտին. ասսու իրան օրը առավոտը գշերով-գշերհանա վեր էր կենում, ոշխարը աղաք անում, սարը բացվում էր, քշում էր հանդը, արածացնում, իրիկունը, որ մութը գետինը կոխում էր, էլ եդ քշում էր, բերում տում:

Ըսենց մի՛ն, է՛րկու, հի՛նդ, տա՛սը, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մի՛ շարաթ, է՛րկու շարաթ, ի՛րեք շարաթ, մախլասի՝ մի ամիս, օրեն մի օրը ինքն իրան միտք ա անում. «Հերնըմերս, — ասում ա,— ինձ թամրահ են արե, որ ֆլա՛ն սարը չէթամ, ընդե սատանեք կան, զլուխս փորձանք կզա: Ի՞նչ ըլնում ա ըլնի, — ասում ա, — պտի էթամ, տենամ ընդե ի՞նչ կա, ի՞նչ չկա»:

Ասում ա, ոշխարը քշում դպա էն սարը: Գալիս ա ի՞նչ տենում. հրենիկ սատանեքը կիտվել են, մի գերանի վրեն չերկուն

նստոտեմ: Էս որ տենում ա՛ տղի թուք ու մուքը կպնում ա, քիչ ա
մնում լեղաճաք ըլնի:

— Ա՛յ տղա,— ձեն են տալիս սատանեքը,— ա՛րի էս գերա-
նը ճղա՛:

Տղեն մոտանում ա, տենում սատանեքը ուզում են էդ գերանը
ճղի, համա չեն կարում:

— Ըտենց ո՞նց կըլնի,— ասում ա տղեն,— սեպ բերեք որ
ճղեմ:

— Մեզ ո՞րդիան ա սեպ,— ասում են սատանեքը:

Տղեն բերում ա կացնով տալի, գերանը մխելի տեղ ճղում, են-
նա ասում ա.— Որ սեպ չունեք, բերեք ձեռքներդ դրեք էս գերանի
արանքը, կացնով տամ, ալրիալը կճղվի:

— Լա՛վ,— ասում են սատանեքը:

Բերում են ձեռները գնում գերանի արանքը: Տղեն կացինը որ
չի հանում, քոմմըի ձեռն էլ մնում ա գերանի արանքին: Նոր քա-
շում ա կացինը էդ սատանեքանցը քոմմըին էլ կոտորում, շանսա-
տակ անում, թողում: Մենակ մի չոլախ սատանա ա պրծնում դրա
ձեռիցը, էդ սատանեն որ տենում ա ընկերուինքը սատկեցին, գլուխն
առնում ա փախնում: Տղեն կացինը վեր ա ունում, ընկնում դրա
եղկիցը:

Վազում ա, վազում ա, վազում ա՛ հասնում ա էդ սատանին.
ուզում ա կացնով տա, տեղն ու տեղը լրջնամիշ անի, սատկացնի,
նա աղաշանք, պաղատանք ա անում.— Ա՛զպեր,— ասում ա,— ինձ
մի սրպանի, ես էլ քեզ մի լավություն կանեմ: Թու հորնըմոր աշ-
քերը, ասում ա,— մենք ենք հանե, հրես իմ ձեռին ա, ուզում ես
տամ, թաքիլան ինձ ձեռը շտաս:

— Լա՛վ,— ասում ա տղեն,— բե տո՛ւ, ձեռը շեմ տա:

Էդ շոլախ սատանեն ձեռը տանում ա շերը, նրա հորնըմոր աշ-
քերը հանում, տալի նրան:

— Ա՛ռ,— ասում ա,— էս հորդ աշքերը, ըս էլ մորդ աշքերը:

Բերում ա տղին մի բմբով տալի:— Ա՛ռ,— ասում ա,— էս բըմ-
բովը. աշքերը որ կդնես իրանց տեղը, եննա էս բմբովը շրի միշին
թաց կանես, կքսես աշքերին. քսելու բաշտան աշքերը կլավանան:

Էս տղեն ա՛ աշքերը առնում ա, դնում շերը, սատանի հեննա
մնաս բարով անում, վե կենում ոշխարը աղաք անում, քշում: Քշում
ա, քշում ա, մութը որ կոխում ա գետինը, հասնում ա էն սարը:

Սարը բացվում ա, ովսարը նեքսև ա անում, սարը էլ եղ կալնվում ա: էդ մայիֆ մարդ ու կնիկը որ իմանում են տղեն էկավ, ուրախանում, աշխարով մին են ընում:

— Հը՛, ա՛յ տղա, — ասում են, — ըսկի ի՞նչ կա, ի՞նչ չկա, մենք բեղանից նիգյարան ինք, հո էն սարը զգնացիր:

— Ո՞նց չէ, — ասում ա տղեն, — զնացի, էն սատանեքանց հախիցը էկա, քոմմբքին էլ սատկացրի, ձեր ինապը հանեցի նրանցից. հրես էրկսիդ աշքերն էլ բերել եմ:

Բերում ա աշքերը զնում իրանց տեղո. սաղացնում, ոնց որ պետքն ա դրստում, եննա հանում ա բմբուզը զրի միշին թաց անում, քսում նրանց աշքերին: Թսում ա թե չէ, աշքները բացվում ա, տենում են:

— Զորա՞նաս, ա՛յ որդի, — ասում են, — դու որ մեզ էս լավությունը արիր, սրա տակիցը մենք ո՞նց պտի դուս դանք:

— Եա՞տ մենծ բան ա, — ասում ա տղեն, — էսքամ վախտ ձեր տանը կենում եմ, ձեր հացն ուտում, ձեր ջուրը խմում, ի՞նչ կըլի, որ ես էլ մի օր ձեր հավարին հասնեմ:

— Ա՛յ որդի, — ասում են, — էս հետ որ անփորձանք էն սատանեքանց ձեռիցը պրծար, սաղ-սալամաթ եղ էկար, ըստուց դենք քեզ մուզաթ կաց, էն Ասլանի սարը չէթաս հա՞՝, թե չէ քեզ կփրքրի, ձվիդ-ձվիդ կանի, մենծ թիքեն անկաշդ կթողա:

— Լա՞վ, — ասում ա տղեն, — որ ասում եք՝ չեմ էթա:

Հաց են ուտում, պրծնում, թեք են ընկնում քնում: Առավոտը լիսը բացվում ա, տղեն էլի ովսարը աղաք ա անում, քշում տանում հանդր արածացնելու:

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ զիտա, ճամփին ինքն իրան միտք ա անում. ո՞նչ կըլի, կըլի, — ասում ա, — ա՛րի հմի էլ էթամ էն մի սարը, տենամ ընդե ի՞նչ կա՞:

Ասում ա, տալի մնուն անց կենում, ովսարը քշում էն սարը, էթում ա ի՞նչ տենում՝ Ասլանի ձենը սաղ աշխարքը վեր ա կալե, ընե՞նց մի ձեն ա հանում, ընե՞նց մի ձեն ա հանում, որ աստոծ փրկի, ազատի. դու մի ասի, էդ Ասլանը ցավում ա:

Ասլանը էս տղին որ տենում ա, ձեն ա տալի. — Ի՞նս ես, զի՞նս ես, քանա՞վար ես՝ ձե՞ն հանա, ինձ էս նեղ տեղիցը աղա՛տա. հրես ցավում եմ, քանի ճուտ բերեմ, հալալ կես անեմ հեննեդ. էրկուսը

րլնի, մինը՝ ինձ, մինը՝ քեզ, շորսը ըլնի, էրկուսը՝ քեզ, էրկուսը՝ ինձ. դարո՞վ ես:

— Դա՛քով եմ,— ասում ա տղեն:

Էթում ա Ասլանի աղաքին չորսում, նրան ազատում: Էղ Ասլանը շորս ճուտ ա բերում: Ասլանը էրկուսը ինքն ա վեր ունում, էրկուսը տալի էղ տղին:

— Տա՛ր,— ասում ա Ասլանը,— դու որ ինձ էս նեղ տեղիցը աղատեցիր, տա՛ր, մորդ կաթի նման քեզ հալալ ա:

Էղ տղեն ա՝ Ասլանի ճուտերը վեր ա ունում, ոշխարը աղաք անում, դալի տուն: Սարը ճղվում ա, բաց ըլնում, տղեն ոշխարը անում ա նեքսն:

— Հը՛,— հարցնում են էն մարդ ու կնիկը,— իսի՞ էսքամ եղացար:

— Բա՛ չեք ասի,— ասում ա,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, ֆլա՛ն Ասլանին աղատեցի, էս էրկու ճուտն էլ ինձ փեշքաշ արեց:

Էղ տղեն ա՝ բերում ա Ասլանի ճուտերը իրա կշտին պահում: Քանի պումուր ին, դրանց կաթ ա ուտացնում, որ մի քիչ մենծանում, զնջով կապուտում ա, որ չփախնեն: Մնի անումը, Ասլան ա զնում, մեկելինը՝ Ղափլան:

Անց ա կենում ըսենց մի բանի վախտ՝ մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րեք ամիս, մախլասի՛ վեց ամիս, օրեն մի օրը էս տղեն միտք ա անում. ռէթամ մեր երկիրը,— ասում ա,— տենամ ի՛նչ կա, ի՛նչ չկա, մերս ո՞նց ա, ի՛նչ ա անում, սաղ-սալամա՞թ ա, թե չէս:

Դալիս ա էղ մարդ ու կնկա կուշտը:

— Ուզում եմ էթամ մեր երկիրը,— ասում ա,— ի՛նչ կասեք. իդին կտաք՝ կէթամ, թե չէ, ոռ չէ:

— Դո՛ւ գիտաս, ա՛յ որդի,— ասում են էն մարդ ու կնիկը,— սիրտդ ուզում ա՝ գնա՞յ, ի՛նչ ալտի ասենք:

— Բա՛ս որ ըտենց ա,— ասում ա,— կէթամ: Ինձանից ձեզ ամանաթ, իմ Ասլան-Ղափլանին լավ մուղաթ կկենաք ընշանք իմ գալը. բան ա, թե տենաք շարշարվում են, տեղները դինջ չեն կենում, ուզում են փախնի՝ իմաց կացեք նեղ տեղ եմ, բաց թողեք դան, հավարիս հասնեն:

— Լա՛վ,— ասում են էն մարդ ու կնիկը,— արխեին կաց, ոնց որ ասեցիր, ընենց էլ կանենք:

Էս տղեն ա՝ ճամփի թագարեք ա տենում, յարադ-ասպարը

կապում, նիլնում ձին՝ յա՛լլա: Գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստոծ զիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, ճամփի կեսը որ գալիս ա, ըտե մի սարի զլսի մի ջովստ մում ա վառում, տալի անց կենում: Գալիս ա, գալի, հասնում ա իրանց երկիրը: Գալիս ա ի՞նչ տենում՝ իրանց երկիրը սաղ բրիշակ ա զառե, որ ասես, մարդ-մադաթ շկա: Էթում ա իրանց տունը. ձին դռանը կապում ա, ինքը մննում նեխսն, տենում ա ո՞նչ մեր կա, ո՞նչ զադ, մենակ քիրը ընդե նստել ա, աշքերն էլ ճրաքի նման լիս ա տալի: Էս որ շի տե-նում, մնում է սառած մտիկ անելոն:

Քիրը որ աղպորը տենում ա, վազում է փաթթվում ճոռվը:

— Քի՞րը շարդ տանի, ա'զպեր ջան,— ասում ա,— բարո՞վ, հա՛զար բարին ես էկե, ո՞նց ես, լա՞վ ես. Էս ո՞ւր իր էսքամ վախտ:

— Ա'զպերը քեզ մատաղ,— ասում ա,— զնացել ի ղարրու-թյուն. Հմի էկել եմ քեզանից կարոտս առնեմ, էլի վե կենամ էթամ:

— Ա'զպեր ջան,— ասում ա,— ո՞տով ես էկե, թե ձիով:

— Զիով եմ էկե,— ասում ա:

Քիրը էս որ լսում ա, ալրիալը դուս ա գալի դուռը, տենում ձին ընդե կապած ա: Վրա ա պրծնում ձիու մի ոտը կուզ տալի:

Ենա գալիս ա հարցնում.— Ա'զպեր ջան, իրեք ոննանի ձիո՞վ ես էկե:

— Հա՞,— ասում ա,— իրեք ոննանի ձիով եմ էկե:

Քիրը դուս ա գալի ձիու մի ոտն էլ ա ուտում, գալի հարց-նում.— Ա'զպեր ջան, էրկու ոննանի ձիո՞վ ես էկե:

— Հա՞,— ասում ա,— էրկու ոննանի ձիով եմ էկե:

Քիրը դուս ա գալի ձիու մի ոտն էլ ա ուտում, գալի հարց-նում.— Ա'զպեր ջան, մի ոննանի ձիո՞վ ես էկե:

— Հա՞,— ասում ա,— մի ոննանի ձիով եմ էկե:

Քիրը դուս ա գալի ձիու մի ոտն էլ ա կուզ տալի, գալի հարց-նում.— Ա'զպեր ջան, քու ձին ո՞ններ շուներ:

— Հա՞,— ասում ա,— շուներ, փորսող ա էկե:

Քիրը էս խոսքի վրեն էթում ա ձին սաղ ուտում, պրծնում, են-նա գալիս ա հարցնում.— Աղպեր ջան, փիադա՞ ես էկե:

— Հա՞,— ասում ա,— փիադա եմ էկե:

— Ա'զպեր ջան, բա՛ս որ ըտենց ա, կաց էթամ ձու բերեմ, ձվաձեղ անեմ, կե՞:

Քիրը թողում ա դուս գալի: Էդ աղջիկը քոմմըքին կերել էր, մե-

նակ թողն մի դարբին, որ եք ուզննա՝ էթա նրա կուշտը, ատամ-ները սրիլ տա: Սա որ ոտք դուս ա դնում թե չէ, աղպերը վեր ա կննում, փախանում. զլիսի ա ընկնում, որ պտի գա իրան էլ ուտի: Մի քիչ մնում ա, քիրը գալիս ա տենում աղպեր չկա: Դե՛ս աղպեր, զե՞ն աղպեր, ման ա գալի՝ չի գտնում. դուս ա գալի ընկնում նրա բաժակիցը: Աղպերը վազում ա, քիրը սրա եննուցը: Աղպերը գալիս ա, գալի, հասնում ա էն սարի գլուխը, որդե մի ջովստ մում էր վանե. տենում ա էն մմերը դառել են, ասսու հրամանով, էրկու հաստ բարդու ծառ, տենում ա քիչ ա մնում քիրը նրան հասնի, ալրիալը նիլնում ա մի բարդու գլուխը: Քիրը գալիս ա հասնում աղպորը. տենում ա աղպերը նի ա էլե բարդու գլուխը, բերում ա էդ բարդու քոքը կոծում ա, որ վե քցի. կոծում ա, կոծում ա, էնքամ կոծում ա, որ բարդին բարակում ա, քիչ ա մնում վեր ընկնի: Տղեն էս որ տենում ա, իրան քցում ա էն մի բարդու գլուխը: Քիրը գալիս ա էդ բարդու քոքն էլ ա կոծում:

Տղեն տենում ա, որ քիչ ա մնում էդ բարդին էլ վե քցի՝ ձեն ա տալի: — Հե՛յ գիդի իմ! Ա'սլան-Ղա՛ֆլան, ո՞րդի եք՝ հասե՛ք, ընե՛նց հուպ տվեք, ընե՛նց կուլ տվեք, որ մի պուտ արին ա կաթա:

Ձեն ա տալի թե չէ, տենում ա հրենիկ գիդիջըդ Ասյան-Ղաֆլանը էկան: Գալու բաշտան վրա են պրծնում էդ աղջկանը ընենց հուպ տալի, ընենց կուլ տալի, որ մենակ մի պուտ արին ա կաթում:

Կաթալու բաշտան էդ մի պուտ արինը ասսու հրամանով լիզու էլավ, խոսաց. — Ա'ղպեր, — ասեց, — ինձ վե կալ կշտիդ պահա, մի նեղ տեղ քեզ պետքը կզամ:

Աղպերը մի պուտ արինը վե կալավ, դրեց քթակի ծալը, Ասլան-Ղաֆլանի հնենա ընկավ ճամփա:

Էկավ, էկավ, էկավ, շատն ու քիլն աստոծ գիտա, մի՛ օր, է՛ր-կու օր, ի՛րեք օր, ճամփին մի լորան ուսստ էկավ:

— Բա՛ր'աղողում, ա՛ղպեր, — ասեց լորանը, — էդ ո՞ւ ես էթում:

— Բարո՛վ, ասսու հա՛ղար բարին, — ասեց տղեն, — էթում եմ մեր երկիրը:

— Արի մի բանի վրեն մարշ դանք, — ասեց, — գուար՝ էս սուրու ոչխարը քեզ, չգտար՝ էդ Ասլան-Ղաֆլանը ինձ: Ղարո՛վ ես:

— Ղա՛րու եմ, — ասեց, — ա՛րի մարշ գանք:

— Էս շըվու փետը ընչի՛ ա, — հարցրեց լորանը:

Տղեն միտք արեց, միտք արեց, միտք արեց, շատ գլխին զոռ
տվեց՝ լգտավ:

Էն պուտ արինը բթակի ծալիցը ձեն տվեց. — Ճըռը-ճա՛պկի,
ճըռը-ճա՛պկի,

— Ա՛ղպեր, գտար, — ասեց շոբանը, — էս սուրու ոչխարը մորդ
կաթի նման քեզ հալալ ա, տա՛ր:

Տղեն էդ սուրու ոչխարը աղաք արեց, քշեց: Էլավ, էկավ, հա-
ւավ էն սարը: Սարը ճղվեց, բաց էլավ, տղեն ոչխարը քշեց, արեց
նեթաւ: Էն մարդ ու կնիկը սրան որ տեհան, ուրախացան, աշխա-
րով մին էլան: Նո՞ր տղեն նստեց բստե մին-մին նազլ արեց իրա-
գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նազլ արի:

Ինչ քե՛ֆ, ինչ ուրախությո՞ւն, որ էլ հա՛լ ու հեսար լկար:
Նրանք հասան իրա՞նց մուրավին, դուք էլ հասնեք ձե՛ր մո-
րադին:

